

**No. 47004**

—  
**Cyprus  
and  
Armenia**

**Agreement between the Government of the Republic of Cyprus and the Government of the Republic of Armenia on co-operation in the fields of public health and medical science. Nicosia, 5 July 2004**

**Entry into force:** *24 April 2008 by notification, in accordance with article 9*

**Authentic texts:** *Armenian, English and Greek*

**Registration with the Secretariat of the United Nations:** *Cyprus, 22 January 2010*

—  
**Chypre  
et  
Arménie**

**Accord entre le Gouvernement de la République de Chypre et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération dans les domaines de la santé publique et des sciences médicales. Nicosie, 5 juillet 2004**

**Entrée en vigueur :** *24 avril 2008 par notification, conformément à l'article 9*

**Textes authentiques :** *arménien, anglais et grec*

**Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies :** *Chypre, 22 janvier 2010*

[ ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN ]

**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր**

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՎ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՍԻՋԵՎ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

**ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ**

Կիսարարական Հանրապետության Կառավարությունը՝ առողջապահության նախարարության միջոցով և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ առողջապահության նախարարության միջոցով, որոնք այսուհետև կանվանվեն Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով խրախուսել համագործակցությունը առողջապահության և բժշկագիտության բնագավառներում ի շահ երկու երկրների ժողովուրդների,

հաշվի առնելով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բժշկական խնդիրների լուծման արագացմանն ուղղված համատեղ ջանքերի կարևորությունը,

համոզված լինելով, որ այդ համագործակցությունը մեծապես կնպաստի երկու երկրների միջև հարաբերությունների զարգացմանը՝

ստորագրեցին հետևյալ համաձայնագիրը.

### ՀՈՂՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը փոխադարձության հիման վրա կզարգացնեն և կընդլայնեն համագործակցություն առողջապահության և բժշկագիտության բնագավառներում՝ յուրաքանչյուր երկրի գործող օրենսդրությանը համապատասխան: Այդ համագործակցությունը կզարգանա գլխավորապես հետևյալ բնագավառներում.

- ա) սրտանոթային հիվանդություններ,
- բ) չարորակ նորագոյացություններ,
- գ) ընդհանուր վիրաբուժություն, ներյոզվիրաբուժություն, մանկական վիրաբուժություն,
- դ) օֆթալմոլոգիա,
- ե) թոքային հիվանդություններ և տուբերկուլյոզ,
- զ) դեղաբանություն,
- է) բուժման ֆիզիկական մեթոդներ և ջրաբուժություն,
- ը) սննդի, դեղերի, ջրի և շրջակա միջավայրի որակի վերահսկում,
- թ) հոգեկան առողջություն,
- ժ) ուրոլոգիա,
- ժա) անեսթեզիոլոգիա,
- ժբ) ինտենսիվ թերապիա,
- ժգ) օպերատիվ գինեկոլոգիա,
- ժդ) անտենատոլոգիա, պերինատոլոգիա, նեոնատոլոգիա,
- ժե) արհեստական բեղմնավորում,

ժգ) առողջապահական կադրերի նախադիպլոմային և հետդիպլոմային ուսուցում,

ժէ) առողջապահության բարեփոխումներ,

ժը) բժշկության և առողջապահության բնագավառներում համագործակցության փոխհամաձայնությանը որոշված այլ ոլորտներ:

## ՀՈՂ-ՎԱՏ 2

Պայմանավորվող կողմերը նախապատվություն կտան համագործակցության հետևյալ ձևերին.

ա) գիտատեխնոլոգիական տեղեկատվության փոխանակում,

բ) երկու երկրների միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառներում մասնագետների և պատվիրակությունների փոխանակում,

գ) մասնակցություն երկու երկրներից մեկում կազմակերպված միջազգային համաժողովներին,

դ) համաձայնեցված ծրագրերի հիման վրա համատեղ հետազոտություններ,

ե) համատեղ սիմպոզիումներ, խորհրդատվական ժողովներ և սեմինարներ,

զ) երկու Կողմերի բժշկական անձնակազմերի կարճատև և երկարատև փոխադարձ աշխատանքային այցերի կազմակերպում:

## ՀՈՂ-ՎԱՏ 3

Սույն Համաձայնագրից բխող պարտականությունները կատարելու համար Պայմանավորվող կողմերը համաձայնում են սահմանել փոխանակումների քվոտա՝ յուրաքանչյուր Կողմից ամեն մարդու համար տարեկան մինչև երեսուն օր չափով:

## ՀՈՂ-ՎԱՏ 4

Սույն Համաձայնագրի դրույթները իրականացնելու համար Պայմանավորվող կողմերը կստեղծեն աշխատանքային խումբ, որը կկազմի աշխատանքային ծրագրեր և պարբերաբար կզնահատի սույն համագործակցության ծրագրերի իրականացման առաջընթացը:

Աշխատանքային խումբը բաղկացած կլինի Կողմերի երեքական ներկայացուցիչներից, որոնք կնշանակվեն երկու պետությունների առողջապահության նախարարների կողմից:

## ՀՈԴՎԱԾ 5

Երկու երկրներից որևէ մեկը այցելող անձինք, սույն Համաձայնագրին համապատասխան, սուր հիվանդությունների առաջացման դեպքում իրավունք կունենան հյուրընկալ երկրի տարածքում գտնվելու ժամանակ ստանալ անվճար բժշկական օգնություն:

## ՀՈԴՎԱԾ 6

Սույն համագործակցությունը կֆինանսավորվի Կիպրոսի Հանրապետության Կառավարության կողմից և Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից, ինչպես նաև համագործակցությանը մասնակցող հետազոտական հիմնարկների և այլ հաստատությունների կողմից:

Մասնագետների փոխանակումը դրա համար սահմանված քվոտայի շրջանակներում կֆինանսավորվի հետևյալ կերպ.

ա) ուղարկող երկիրը կվճարի հյուրընկալ երկրի մայրաքաղաք մեկնելու և հետադարձ ուղևորության ծախսերը,

բ) հյուրընկալ երկիրը կվճարի կեցության բոլոր ծախսերը, հյուրանոցի ծախսերը, այդ երկրում գիտական ծրագրի իրականացման օրակարգից բխող ճանապարհածախսը, գիտական համաժողովների, կոնֆերանսների և վեհաժողովների, ինչպես նաև հետազոտական աշխատանքների հետ կապված ծախսերը:

## ՀՈԴՎԱԾ 7

Պայմանավորվող կողմերը փոխհամաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրությունները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որևէ վեճ Պայմանավորվող կողմերի միջև կկարգավորվի խորհրդակցությունների միջոցով: Եթե վեճը այդ ճանապարհով չի կարգավորվում, ապա այն կհանձնվի միջնորդ դատարանի քննարկմանը՝ Պայմանավորվող կող-